«Հայաստանի Հանրապետությունում ԱՏԳ ԱԱ 2402 ծածկագրին դասվող ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում նույնականացման միջոցներով դրոշմավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2023 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՏԳ ԱԱ 2402 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2018 թվականի փետրվարի 2-ի «Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին» համաձայնագիրը և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 396.1-ին հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի մարտի 1-ից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 389-րդ հոդվածով սահմանված ԱՏԳԱԱ 2402 ծածկագրին դասվող ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորումը իրականացվում է համաձայն Եվրասիական տնտեսական խորհրդի կողմից 2021 թվականի մարտի 5-ին հաստատված Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելի (այսուհետ՝ հիմնական մոդել)։
2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 389-րդ հոդվածով սահմանված ԱՏԳԱԱ 2402 ծածկագրին դասվող ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա

ապրանքները հիմնական մոդելի համաձայն դրոշմավորմանը զուգահեռ շարունակվում են դրոշմավորվել ակցիզային դրոշմանիշերով մինչև ակցիզային դրոշմանիշերի վերջնական սպառումը և շրջանառությունից հանվելը։

3. Սահմանել, որ հիմնական մոդելի համաձայն դրոշմավորված ապրանքների մասին տեղեկությունների ձևաչափի, կազմի և կառուցվածքի, ինչպես նաև այդ տեղեկությունների փոխանցման ժամկետների նկատմամբ պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանով։
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 389-րդ հոդվածով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2402 ծածկագրին դասվող ապրանքների՝ հիմնական մոդելի համաձայն դրոշմավորման կարգը՝ համաձայն հավելվածի։
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հավելված

ՀՀ կառավարության 2023 թվականի

_____ ____-ի N____-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 389-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԱՏԳ ԱԱ 2402 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 389-րդ հոդվածով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2402 ծածկագրին դասվող ապրանքների (այսուհետ՝ ծխախոտային արտադրանք)՝ Եվրասիական տնտեսական խորհրդի կողմից 2021 թվականի մարտի 5-ին հաստատված Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելի (այսուհետ՝ հիմնական մոդել) համաձայն դրոշմավորման հետ կապված հարաբերությունները։

2. Ծխախոտային արտադրանքի նույնականացման միջոցը կիրառվում է ծխախոտային արտադրանքի անհատական և խմբային փաթեթավորման կամ պիտակի վրա՝ երկչափ շտրիխ ծածկագրի տեսքով։

3. Ծխախոտային արտադրանքի անհատական և խմբային փաթեթավորման կամ պիտակի վրա նույնականացման միջոցների դրոշմավորման որակի պահանջն է տպագրությունը ECC-200 սխալների ուղղման մեթոդով՝ ISO/IEC 16022:2006 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան (ISO/IEC 16022:2006 «Տեղեկատվական տեխնոլոգիա՝ ավտոմատացված նույնականացման և տվյալների հավաքագրման տեխնիկաներ՝ Data Matrix ձևաչափով շտրիխ ծածկագրի սիմվոլիական տեխնիկական հատկորոշիչ»):

3. Ծխախոտային արտադրանքի անհատական փաթեթավորման նույնականացման միջոցը ներառում է դրոշմավորման ծածկագիրը՝ երկչափ շտրիխ ծածկագիր DataMatrix ձևաչափով՝ հարմար մեքենայական ընթերցման համար, որը ներառում է տվյալների 3 (երեք) պարտադիր խումբ, որոնցից առաջին 2 (երկու) խումբը անհատական փաթեթավորման նույնականացման ծածկագիրն է, ընդ որում՝

- պարտադիր տվյալների առաջին խումբը ներառում է անհատական փաթեթավորման (GTIN) ապրանքի ծածկագիրը՝ բաղկացած 14 (տասնչորս) նիշից,
- պարտադիր տվյալների երկրորդ խումբը ներառում է անհատական փաթեթավորման անհատական սերիական համար՝ բաղկացած 7 նիշից (թվանշաններ, լատինատառ այբուբենի մեծատառեր և փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()*+,-./_:;=<>?)),
- պարտադիր տվյալների երրորդ խումբը ներառում է ստուգման ծածկագիր՝ բաղկացած 8 նիշից (թվանշաններ, լատինատառ այբուբենի մեծատառեր և փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()*+,-./_:;=<>?)), որը տրամադրում է օպերատորը:

4. Ծխախոտային արտադրանքի խմբային փաթեթավորման դրոշմավորման համար օգտագործվում է նույնականացման միջոց, որը ներառում է դրոշմավորման ծածկագիր՝ երկչափ շտրիխ ծածկագիր DataMatrix ձևաչափով՝ հարմար մեքենայական ընթերցման համար, որը ներառում է տվյալների 3 (երեք) պարտադիր խումբ, որոնցից առաջին 2-ը (երկուսը) ձևավորում են խմբային փաթեթավորման նույնականացման ծածկագիրը, ընդ որում՝

- պարտադիր տվյալների առաջին խումբը նույնականացվում է AI = '01' կիրառման ծածկագրով և ներառում է խմբային փաթեթավորման ապրանքի ծածկագիրը, որը բաղկացած է 14 (տասնչորս) նիշից (GTIN).
- պարտադիր տվյալների երկրորդ խումբը նույնականացվում է AI = '21' կիրառման ծածկագրով և ներառում է անհատական փաթեթավորման անհատական սերիական համար՝ բաղկացած 7 նիշից (թվանշաններ, լատինատառ այբուբենի մեծատառեր և փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր): Տվյալների այս խմբի եզրափակիչ նիշը հանդիսանում է նիշ-բաժանարարը, որն ունի «29» ծածկագիրը ASCII նիշերի աղյուսակում,
- պարտադիր տվյալների երրորդ խումբը նույնականացվում է AI = '93' կիրառման ծածկագրով և ներառում է ստուգման ծածկագիր՝ բաղկացած 8 նիշից (թվանշաններ, լատինատառ այբուբենի մեծատառեր և փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր), որը տրամադրում է օպերատորը:

5. Նույնականացման միջոցը փակցվում է անհատական և խմբային փաթեթավորման և (կամ) պիտակի վրա այնպիսի մեթոդով, որը թույլ չի տալիս նույնականացման միջոցն առանձնացնել փաթեթից կամ պիտակից:

Անհատական փաթեթավորման վրա նույնականացման միջոցների փակցման նկատմամբ կիրառվում են հետևյալ պահանջները.

ա) նույնականացման միջոցը չպետք է տպվի փաթեթավորման թափանցիկ թաղանթի կամ արտաքին փաթեթավորման այլ նյութի վրա և չպետք է ծածկվի որևէ այլ տեղեկատվությամբ,

բ) նույնականացման միջոցը պետք է փակցված լինի այնպես, որ անհատական փաթեթավորման վրա տպված տեղեկատվության ամբողջականությունը չխախտվի՝ համաձայն տեխնիկական կանոնակարգման մասին օրենսդրության պահանջների:

Ծխախոտային արտադրանքի պիտակի փակցման նկատմամբ կիրառվում են հետևյալ պահանջները.

ա) ծխախոտային արտադրանքի անհատական կամ խմբային փաթեթավորման վրա պիտակներ փակցնելու համար պետք է օգտագործվի տեխնոլոգիա, որն ապահովում է պիտակի վրա տպված նույնականացման միջոցների ընթերցումը պիտակի կիրառման պահից մինչև ծխախոտային արտադրանքը սպառողին վաճառելու պահը,

բ) պիտակը փակցվում է ծխախոտային արտադրանքի անհատական կամ խմբային փաթեթավորման վրա սոսնձման միջոցով, թույլատրվում է պիտակը փակցնել ծխախոտային արտադրանք արտադրողի կողմից արտադրանքի փաթեթավորման համար կիրառվող թաղանթի վրա,

գ) չի թույլատրվում պիտակի վրա տպել ծխախոտային արտադրանքի փաթեթավորման որևէ տարր (բացառությամբ արտադրողի կողմից ծխախոտային արտադրանքի փաթեթավորման համար կիրառվող փաթեթավորման թափանցիկ թաղանթը), որոնք ծածկում են պիտակի մակերեսը և դժվարացնում են նույնականացման միջոցների ընթերցումը:

6. Դրոշմավորման ծածկագիրը փակցվում է փաթեթի ներքևում կամ կողային հատվածում՝ հաշվի առնելով փաթեթի դիզայնը և ագրեգացման գործընթացները: